



**ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 11(162) «22» հոկտեմբերի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
	ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
74	«Արտադրական սենքերի միկրոկլիմայի» ՄՆ N 2.2.4-001-18 սանիտարական նորմերը հաստատելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 237-Ն հրամանը.....	2
75	«Արցախի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 06-ի N 14-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 238-Ն հրամանը.....	11
76	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 12-Ն հրամանը.....	41
ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ		
	Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից սեպտեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	45
	ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից սեպտեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ.....	46

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
11-ին հոկտեմբերի 2018 թվականին
Պետական գրանցման համարը 1011867

**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«27» սեպտեմբերի 2018թ.

N 237-Ն

ք. Ստեփանակերտ

**«ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՍԵՆՔԵՐԻ ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻ» ՄՆ N 2.2.4-001-18
ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-
թյան 2004 թվականի մարտի 16-ի N 90 որոշմամբ հաստատված հավելված 1-ի
9-րդ կետի 20-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Արտադրական սենքերի միկրոկլիմայի» ՄՆ N 2.2.4-001-18 սանիտարական նորմերը՝ համաձայն հավելվածի:
2. Մույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Ա. ԲԱՂՅԱՆ

ՄԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՍԵՆՔԵՐԻ ՄԻԿՐՈՎԼԻՄԱՅԻ ՄՆ N 2.2.4-001-18

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՈՒՈՐՏ

1. Սույն սանիտարական նորմերը (այսուհետ՝ Նորմեր) նախատեսված են արտադրական սենքերի աշխատատեղերում մարդու ինքնազգացողության, ֆունկցիոնալ վիճակի, աշխատունակության և առողջության վրա միկրոկլիմայի անբարենպաստ ազդեցության կանխարգելման համար:

2. Սույն Նորմերում բերված՝ էներգածախսի ինտենսիվությամբ պայմանավորված, աշխատանքի կարգերը սահմանվում են Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի օգոստոսի 22-ի N 202-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոններով և նորմերով:

3. Սույն Նորմերը տարածվում են բոլոր արտադրական սենքերի վրա և պարտադիր են իրավաբանական և ֆիզիկական անձանց համար՝ անկախ սեփականության ձևից:

4. Սույն Նորմերի կատարման հսկողությունն իրականացվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից:

II. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՄԱՇՄԱՆՈՒՄՆԵՐ

5. Արտադրական սենք - հատուկ նշանակության շենքերի և շինությունների փակ տարածություններ, որոնցում մշտական (հերթափոխով) կամ պարբերաբար (աշխատանքային օրվա ընթացքում) իրականացվում է մարդկանց աշխատանքային գործունեությունը:

6. Աշխատատեղ - սենքի տեղամաս, որում աշխատանքային հերթափոխի ընթացքում կամ նրա մի ժամանակահատվածում իրականացվում է աշխատանքային գործունեություն:

7. Տարվա սառը եղանակ - տարվա եղանակ, որը բնութագրվում է դրսի օդի միջին օրական ջերմաստիճանով, հավասար +10 աստիճան Ցելսիուսի և ցածր:

8. Տարվա տաք եղանակ - տարվա եղանակ, որը բնութագրվում է դրսի օդի միջին օրական ջերմաստիճանով, հավասար +10 աստիճան Ցելսիուսի և բարձր:

9. Դրսի օդի միջին օրական ջերմաստիճան - դրսի օդի ջերմաստիճանի միջին մեծությունն է՝ չափված օրվա որոշակի ժամերին, ժամանակի հավասար ընդմիջումներով: Այն որոշվում է օդերևութաբանական ծառայության տվյալների հիման վրա:

10. Աշխատանքի կարգ - սահմանվում է օրգանիզմի ընդհանուր էներգածախսի ինտենսիվությամբ կիլոկալորիա/ժամով (Վատտ):

11. Միջավայրի ջերմային ծանրաբեռնվածություն (այսուհետ՝ ՄՋՕ) -աշխատողի վրա միկրոկլիմայի չափորոշիչների գուգակցված ազդեցություն, արտահայտված միաթիվ ցուցիչով՝ ըստ աստիճան Ցելսիուսի:

III. ՄԻԿՐՈՎԼԻՄԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

12. Սույն Նորմերը սահմանում են արտադրական սենքերի աշխատատեղերի միկրոկլիմայի ցուցանիշների հիգիենիկ պահանջները՝ հաշվի առնելով աշխատողների էներգածախսի ինտենսիվությունը, աշխատանքի կատարման տևողությունը և ներառում են պահանջներ միկրոկլիմայական պայմանների հսկողության և չափման մեթոդների վերաբերյալ:

13. Միկրոկլիմայի ցուցանիշները պետք է ապահովեն մարդու և շրջակա միջավայրի միջև ջերմային հաշվեկշիռը և օրգանիզմի օպտիմալ կամ թույլատրելի ջերմային վիճակը:

14. Արտադրական սենքի միկրոկլիմայի բնութագրող ցուցանիշներն են՝
- 1) օդի ջերմաստիճան.
 - 2) մակերեսների ջերմաստիճան.
 - 3) օդի հարաբերական խոնավություն.
 - 4) օդի շարժման արագություն.
 - 5) ջերմային ճառագայթման ինտենսիվություն:

IV. ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻ ՕՊՏԻՄԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

15. Միկրոկլիմայի օպտիմալ պայմանները սահմանում են աշխատանքային հերթափոխի ընթացքում մարդու օրգանիզմի համար ջերմային և ֆունկցիոնալ վիճակի օպտիմալ չափանիշները, որոնք ջերմակարգավորման մեխանիզմի նվազագույն լարվածության դեպքում ապահովում են ընդհանուր և տեղային ջերմային հարմարավետության զգացողություն, չեն առաջացնում առողջական վիճակի շեղումներ, ստեղծում են աշխատունակության բարձր մակարդակի նախադրյալներ և նախընտրելի են համարվում աշխատատեղերում:

16. Արտադրական սենքերի աշխատատեղերում, որտեղ իրականացվում են նյարդահուզական լարվածության հետ կապված գործադեկավարման բնույթի աշխատանքներ (խցիկում, տեխնոլոգիական գործընթացների դեկավարման կետերում, հաշվողական տեխնիկայի սրահներում և այլն), պետք է ապահովվեն միկրոկլիմայի ցուցանիշների օպտիմալ մեծությունները՝ սույն Նորմերի աղյուսակ 1-ին համապատասխան:

17. Տարվա տաք և սառը եղանակներին աշխատատեղերում միկրոկլիմայի օպտիմալ չափորոշիչները սահմանվում են աշխատանքի տարբեր կարգերին համապատասխան՝ ըստ սույն Նորմերի աղյուսակ 1-ի:

18. Աշխատատեղերում, միկրոկլիմայի օպտիմալ պայմաններում, օդի ջերմաստիճանի տատանումներն ուղղահայաց և հորիզոնական ուղղություններով, ինչպես նաև օդի ջերմաստիճանի փոփոխությունները հերթափոխի ընթացքում չպետք է գերազանցեն 2 աստիճան Ցելսիուսը:

Աղյուսակ 1

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՍԵՆՔԵՐԻ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարվա եղանակ	Աշխատանքի կարգերն ըստ էներգաձախի մակարդակի, Վտ	Օդի ջերմաստիճան, °C	Մակերեսների ջերմաստիճան, °C	Օդի հարաբերական խոնավություն, %	Օդի շարժման արագություն, մ/վրկ	
Սառը	I ա (մինչև 139)	22-24	21-25	60-40	0.1	
	I բ (140-174)	21-23	20-24	60-40	0.1	
	II ա (175-232)	19-21	18-22	60-40	0.2	
	II բ (233-290)	17-19	16-20	60-40	0.2	
	III (290-ից ավել)	16-18	15-19	60-40	0.3	
	Տաք	I ա (մինչև 139)	23-25	22-26	60-40	0.1
		I բ (140-174)	22-24	21-25	60-40	0.1
		II ա (175-232)	20-22	19-23	60-40	0.2
		II բ (233-290)	19-21	18-22	60-40	0.2
III (290-ից ավել)		18-20	17-21	60-40	0.3	

V. ՄԻԿՐՈԿԼԻՄԱՅԻ ԹՈՒՑԱՏՐԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

19. Միկրոկլիմայի թույլատրելի պայմանները սահմանում են աշխատանքային հերթափոխի ընթացքում մարդու ջերմային և ֆունկցիոնալ վիճակի թույլատրելի չա-

փանիշները, չեն առաջացնում մարդու առողջական վիճակի վատթարացում և/կամ վնասվածքներ, չեն կարող առաջացնել ընդհանուր և տեղային անհարմարավետություն, ջերմակարգավորման մեխանիզմի լարվածություն և աշխատունակության անկում:

20. Միկրոկլիմայի ցուցանիշների թույլատրելի մեծությունները սահմանվում են այն դեպքերում, երբ տեխնիկական, տեխնոլոգիական և/կամ տնտեսական հիմնավորված պատճառներով չեն կարող ապահովել օպտիմալ պայմաններ:

21. Աշխատատեղերում միկրոկլիմայի ցուցանիշների թույլատրելի մեծությունները պետք է սահմանվեն սույն Նորմերի աղյուսակ 2-ին համապատասխան:

22. Աշխատատեղերում միկրոկլիմայի թույլատրելի մեծությունների ապահովման դեպքում.

1) օդի ուղղահայաց շարժման ժամանակ ջերմաստիճանի տատանումը չպետք է գերազանցի 3 աստիճան Ցելսիուսը,

2) հերթափոխի ընթացքում օդի հորիզոնական շարժման ժամանակ ջերմաստիճանի տատանումը, ինչպես նաև նրա փոփոխությունը չպետք է գերազանցի՝

ա. աշխատանքի I ա և I Բ կարգերի դեպքում՝ 4 աստիճան Ցելսիուսը,

բ. աշխատանքի II ա և II Բ կարգերի դեպքում՝ 5 աստիճան Ցելսիուսը,

գ. աշխատանքի III կարգի դեպքում՝ 6 աստիճան Ցելսիուսը, պայմանով, որ օդի ջերմաստիճանի բացարձակ արժեքները՝ աշխատանքի առանձին կարգերի համար, չպետք է գերազանցեն սույն Նորմերի աղյուսակ 2-ում սահմանված մեծությունները:

23. Աշխատատեղում օդի ջերմաստիճանի 25 աստիճան Ցելսիուս և բարձրի դեպքում օդի հարաբերական խոնավության առավելագույն մեծությունները չպետք է գերազանցեն հետևյալ ցուցանիշները.

1) օդի 25 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանի դեպքում – 70 տոկոս.

2) օդի 26 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանի դեպքում – 65 տոկոս.

3) օդի 27 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանի դեպքում – 60 տոկոս.

4) օդի 28 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանի դեպքում – 55 տոկոս:

24. Տարվա տաք եղանակի համար, օդի ջերմաստիճանի 26-28 աստիճան Ցելսիուսի դեպքում աշխատատեղում օդի շարժման արագությունը պետք է համապատասխանի հետևյալ միջակայքին՝ սույն Նորմերի աղյուսակ 2-ին համապատասխան.

1) 0,1-0,2 մետր/վայրկյան աշխատանքի I ա կարգի դեպքում.

2) 0,1-0,3 մետր/վայրկյան աշխատանքի I Բ կարգի դեպքում.

3) 0,2-0,4 մետր/վայրկյան աշխատանքի II ա կարգի դեպքում.

4) 0,2-0,5 մետր/վայրկյան աշխատանքի II Բ և III կարգերի դեպքում:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԵՆՔԵՐԻ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ ՄԻԿՐՈՎԼԻՄԱՑԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԹՈՒՑԼԱՏՐԵԼԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարվա եղանակը	Աշխատանքի կարգերն ըստ էներգաձախսի, մակարդակի Վտ	Օդի ջերմաստիճան, °C		Մակերևույթի ջերմաստիճան, °C	Օդի հարաբերական խոնավություն %	Օդի շարժման արագություն, մ/վ	
		օպտիմալ մեծությունից ցածր միջակայք	օպտիմալ մեծությունից բարձր միջակայք			օպտիմալ մեծությունից ցածր օդի ջերմաստիճանի միջակայքի համար, ոչ ավելի	օպտիմալ մեծությունից բարձր օդի ջերմաստիճանի միջակայքի համար, ոչ ավելի
Սառը	I ա (մինչև 139)	20.0 – 21.9	24.1 – 25.0	19.0 - 26.0	15-75*	0.1	0.1
	I բ (140-174)	19.0 – 20.9	23.1 – 24.0	18.0 – 25.0	15-75	0.1	0.2
	II ա (175-232)	17.0 - 18.9	21.1 – 23.0	16.0 – 24.0	15-75	0.1	0.3
	II բ (233-290)	15.0 - 16.9	19.1 – 22.0	14.0 – 23.0	15-75	0.2	0.4
	III (290-ից ավելի)	13.0 - 15.9	18.1 – 21.0	12.0 – 22.0	15-75	0.2	0.4
Տաք	I ա (մինչև 139)	21.0 – 22.9	25.1 - 28.0	20.0 -29.0	15-75*	0.1	0.2
	I բ (140-174)	20.0 – 21.9	24.1 -28.0	19.0 – 29.0	15-75*	0.1	0.3
	II ա (175-232)	18.0 – 19.9	22.1 -27.0	17.0 – 28.0	15-75*	0.1	0.4
	II բ (233-290)	16.0 – 18.9	21.1 – 27.0	15.0 – 28.0	15-75*	0.2	0.5
	III (290-ից ավելի)	15.0 – 17.9	20.1 - 26.0	14.0 – 27.0	15-75*	0.2	0.5

* Օդի ջերմաստիճանի 25 աստիճան Ցելսիուսի և նրանից բարձրի դեպքում, օդի հարաբերական խոնավության առավելագույն մեծությունն որոշելու համար, պետք է ղեկավարվել սույն Նորմերի պահանջներով:

25. Աշխատատեղերում աշխատողների վրա մինչև մուգ լուսարձակումը տաքացված արտադրական աղբյուրներից (նյութերից, արտադրանքից և այլն) ջերմային ճառագայթման ինտենսիվության թույլատրելի մեծությունները պետք է համապատասխանեն սույն Նորմերի աղյուսակ 3-ում բերված ցուցանիշներին:

Աղյուսակ 3

**ԱՐՏԱՂԻԱԿԱՆ ԱՂՔՑՈՒՐՆԵՐԻՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎՐԱ ՋԵՐՄԱՅԻՆ
ՃԱՌԱԳԱՅԹՍԱՀԱՐՄԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մարմնի ճառագայթվող մակերես, %	Ջերմային ճառագայթման ինտենսիվություն Վտ/մ ² , ոչ ավելի
50 և ավելի	35
25-50	70
25-ից ոչ ավելի	100

26. Մինչև սպիտակ և կարմիր լուսարձակումը տաքացված ճառագայթման աղբյուրներից (շիկացված կամ հալված մետաղ, ապակի, բոց և այլն) աշխատողների ջերմային ճառագայթահարման ինտենսիվության թույլատրելի մեծությունները չպետք է գերազանցեն 140 Վատտ/քառակուսի մետրը, պայմանով, որ ճառագայթահարման չպետք է ենթարկվի մարմնի մակերեսի 25 տոկոսից ավելին, և պարտադիր է դեմքի ու աչքերի անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործումը:

27. Աշխատատեղերում, աշխատողների ջերմային ճառագայթահարման առկայության դեպքում, օդի ջերմաստիճանը՝ կախված աշխատանքի կարգից, չպետք է գերազանցի հետևյալ մեծությունները.

- 1) աշխատանքի I ա կարգի դեպքում - 25 աստիճան Ցելսիուսը.
- 2) աշխատանքի I բ կարգի դեպքում - 24 աստիճան Ցելսիուսը.
- 3) աշխատանքի II ա կարգի դեպքում - 22 աստիճան Ցելսիուսը.
- 4) աշխատանքի II բ կարգի դեպքում - 21 աստիճան Ցելսիուսը.
- 5) աշխատանքի III կարգի դեպքում - 21 աստիճան Ցելսիուսը:

28. Արտադրական սենքերում, որտեղ արտադրական գործընթացի տեխնիկական, տեխնոլոգիական և/կամ տնտեսական պատճառներով հնարավոր չէ պահպանել միկրոկլիմայի ցուցանիշների թույլատրելի մեծությունները, աշխատողներն ապահովվում են անհատական և/կամ կոլեկտիվ պաշտպանության միջոցներով:

29. Միկրոկլիմայի չափորոշիչների զուգակցված ազդեցության գնահատման համար, հնարավոր գերտաքացումից աշխատողների պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով կիրառվում է ՄՁԾ ինտեգրալ ցուցանիշը, որը սահմանվում է Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի 2018 թվականի օգոստոսի 22-ի N 202-Ն հրամանով:

30. Հերթափոխի ընթացքում, աշխատատեղում օդի ջերմաստիճանի թույլատրելի մեծություններից բարձրի կամ ցածրի պայմաններում, աշխատաժամի տևողությունը սահմանվում է սույն Նորմերի աղյուսակներ 4-ին և 5-ին համապատասխան:

**ԱՇԽԱՏԱՏԵՂՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՕՂԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ
ԹՈՒՑԼԱՏՐԵԼԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԲԱՐՁՐ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ**

Աշխատատեղում օդի ջերմաստիճանը, °C	Աշխատանքի կարգերի դեպքում աշխատատեղում գտնվելու ժամանակը, ոչ ավելի, ժամ		
	I _ա - I _բ	II _ա - II _բ	III
32.5	1	-	-
32.0	2	-	-
31.5	2.5	1	-
31.0	3	2	-
30.5	4	2.5	1
30.0	5	3	2
29.5	5.5	4	2.5
29.0	6	5	3
28.5	7	5.5	4
28.0	8	6	5
27.5	-	7	5.5
27.0	-	8	6
26.5	-	-	7
26.0	-	-	8

**ԱՇԽԱՏԱՏԵՂՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՕՂԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ
ԹՈՒՑԼԱՏՐԵԼԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՑԱՏՐ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ**

Աշխատատեղում օդի ջերմաստիճանը, °C	Աշխատանքի կարգերի դեպքում աշխատատեղում գտնվելու ժամանակը, ոչ ավելի, ժամ				
	I _ա	I _բ	II _ա	II _բ	III
6	-	-	-	-	1
7	-	-	-	-	2
8	-	-	-	1	3
9	-	-	-	2	4
10	-	-	1	3	5
11	-	-	2	4	6
12	-	1	3	5	7
13	1	2	4	6	8
14	2	3	5	7	-
15	3	4	6	8	-
16	4	5	7	-	-
17	5	6	8	-	-
18	6	7	-	-	-
19	7	8	-	-	-
20	8	-	-	-	-

31. Օդի միջին հերթափոխային ջերմաստիճանը, որի պայմաններում աշխատողները գտնվում են աշխատատեղերում և հանգստի տեղերում, չպետք է գերազանցի սույն Նորմերի աղյուսակ 2-ով սահմանված թույլատրելի մեծությունները:

VI. ՄԻԿՐՈՎԼԻՄՍՅՔԻ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ԵՎ ՉԱՓՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

32. Հիգիենիկ հսկողության նպատակով՝ միկրոկլիմայի ցուցանիշների չափումները կատարվում են տարվա ցուրտ եղանակին, երբ դրսի օդի ջերմաստիճանը տարբերվում է ձմռան առավել ցուրտ ամսվա միջին ջերմաստիճանից ոչ ավելի, քան 5 աստիճան Ցելսիուսով, իսկ տարվա տաք եղանակին, երբ դրսի օդի ջերմաստիճանը տարբերվում է առավել տաք ամսվա միջին առավելագույն ջերմաստիճանից ոչ ավելի, քան 5 աստիճան Ցելսիուսով օդերևութաբանական ծառայությունից մինչև չափման օրը ստացված տվյալների հիման վրա: Չափումների հաճախականությունը տարվա երկու շրջաններում որոշվում է արտադրական գործընթացի կայունությամբ, տեխնոլոգիական և սանիտարատեխնիկական սարքավորումների շահագործման պայմաններում:

33. Տեղամասերը, չափման օրը և ժամը ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել աշխատատեղերում միկրոկլիմայի վրա ազդող հիգիենիկ այլ ցուցանիշները (տեխնոլոգիական գործընթացի փոփոխությունները, ջերմության և օդափոխանակության համակարգերի գործունեությունը և այլն): Միկրոկլիմայի ցուցանիշների չափումները հերթափոխի ընթացքում կատարվում են երեք անգամից ոչ պակաս (հերթափոխի սկզբում, կեսում և վերջում):

34. Չափումները կատարվում են աշխատատեղերում: Եթե աշխատատեղեր են համարվում արտադրական սենքի մի քանի տեղամասերը, ապա չափումները կատարվում են դրանցից յուրաքանչյուրում:

35. Ջերմատվության, սառեցման կամ խոնավության տեղային աղբյուրների առկայության դեպքում (տաքացնող ազդեցություններ, պատուհաններ, դռան բացվածքներ, դարպասներ, բաց լոգնոցներ և այլն) չափումները կատարվում են յուրաքանչյուր աշխատատեղում՝ աղբյուրից նվազագույն և առավելագույն հեռավորության կետերում:

36. Մեծ խտությամբ աշխատատեղերով սենքերում ջերմատվության, սառեցման կամ խոնավության անջատման տեղային աղբյուրների բացակայության ժամանակ օդի ջերմաստիճանի, հարաբերական խոնավության և շարժման արագության չափման տեղերը պետք է տեղաբաշխվեն սենքի մակերեսով հավասարաչափ՝ սույն Նորմերի աղյուսակ 6-ին համապատասխան:

Աղյուսակ 6

ՕՐԻ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԻ, ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՐԻ ՇԱՐՃՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԸ

Սենքի մակերես, մ ²	Չափման տեղերի քանակ
մինչև 100	4
100-ից մինչև 400	8
400-ից բարձր	տեղերի քանակը որոշվում է դրանց միջև հեռավորությամբ, որը չպետք է գերազանցի 10 մ-ը

37. Նստած դիրքում աշխատելիս օդի ջերմաստիճանը և օդի շարժման արագությունը չափվում է հատակից 0,1 և 1,0 մետր բարձրության վրա, իսկ օդի հարաբերական խոնավությունը՝ հատակից կամ աշխատանքային հարթակից՝ 1 մետր բարձրության վրա: Կանգնած դիրքում աշխատելիս օդի ջերմաստիճանը և օդի շարժման արագությունը չափվում է 0,1 և 1,5 մետր բարձրության վրա, իսկ օդի հարաբերական խոնավությունը՝ 1,5 մետր բարձրության վրա:

38. Ջերմային ճառագայթման աղբյուրների առկայության դեպքում աշխատատեղում ջերմային ճառագայթումը չափվում է յուրաքանչյուր աղբյուրից՝ սարքի

ընդունիչը տեղադրելով ընկնող հոսքին ուղղահայաց: Չափումները պետք է կատարել հատակից կամ աշխատանքային հարթակից 0,5, 1,0 և 1,5 մետր բարձրության վրա:

39. Մակերեսների ջերմաստիճանը չափվում է այն դեպքում, երբ աշխատատեղերը դրանցից հեռու են 2 մետրից ոչ ավելի: Յուրաքանչյուր մակերեսի ջերմաստիճանը չափվում է սույն Նորմերի 37-րդ կետում նշված օդի ջերմաստիճանի չափման նման:

40. Աշխատատեղում ջերմային ճառագայթման և օդային հոսքերի առկայության դեպքում օդի ջերմաստիճանի և հարաբերական խոնավության չափումները կատարվում են ասպիրացիոն խոնավաչափով, իսկ ճառագայթային ջերմության և օդային հոսքերի բացակայության դեպքում օդի ջերմաստիճանը և հարաբերական խոնավությունը չափվում են ջերմային ճառագայթումից և օդի շարժման արագության ազդեցությունից չպաշտպանված խոնավաչափով:

41. Օդի շարժման արագությունը չափվում է անեմոմետրով: Օդի շարժման արագության փոքր մեծությունները (0,5 մետր/վայրկյանից փոքր), հատկապես տարբեր ուղղվածության հոսքերի առկայության դեպքում, կարելի է չափել ջերմաէլեկտրաանեմոմետրով և ջերմային ճառագայթումից պաշտպանված գլանային և գնդային կատատերմոմետրով:

42. Մակերեսների ջերմաստիճանը չափվում է կոնտակտային կամ հեռակառավարման սարքերով:

43. Ջերմային ճառագայթման ինտենսիվությունը չափվում է կիսագնդին մոտ տվիչի տեսանելիության անկյունը (160 աստիճան Ցելսիուսից ոչ պակաս) ապահովող և սպեկտրի տեսանելի ու ինֆրակարմիր մասերում զգայուն սարքերով:

44. Չափման և չափիչ սարքերի թույլատրելի սխալի տոկոսները պետք է համապատասխանեն սույն Նորմերի աղյուսակ 7-ի պահանջներին:

Աղյուսակ 7

ՊԱՀԱՆՋՆԵՐ ՉԱՓԻՉ ՍԱՐՔԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ

Ցուցանիշի անվանումը	Չափման միջակայք	Սահմանային շեղում
Օդի ջերմաստիճանն ըստ չոր ջերմաչափի, °C	30-ից մինչև 50	± 0.2
Օդի ջերմաստիճանն ըստ թաց ջերմաչափի, °C	0-ից մինչև 50	± 0.2
Մակերեսների ջերմաստիճանը, °C	0-ից մինչև 50	± 0.5
Օդի հարաբերական խոնավություն, %	0-ից մինչև 90	± 5.0
Օդի շարժման արագություն, մ/վ	0-ից մինչև 0.5	± 0.05
	0.5-ից ավելի	± 0.1
Ջերմային ճառագայթման ինտենսիվություն, Վտ/մ ²	10-ից մինչև 350	± 5.0
	350-ից ավելի	± 50.0

45. Աշխատատեղերում միկրոկլիմայի չափման արդյունքները ձևակերպվում են սահմանված կարգով:

**ԱՐՑԱՌԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 12-ին հոկտեմբերի 2018 թվական
Պետական գրանցման համարը 1011868

**Ա Ր Ց Ա Ւ Ւ Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Ւ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«27» սեպտեմբերի 2018թ.

N 238-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի N 14-Ն ՀՐԱՄԱՆՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Դեղերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի «ժգ» կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Արցախի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի փետրվարի 06-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության 2008 թվականի փետրվարի 15-ի թիվ 25 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 14-Ն հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա. ԲԱՂՅԱՆ

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՂԵՐԻ ՑԱՆԿ

1. ԱՆԶԳԱՑԱՑՆՈՂՆԵՐ	
1) ընդհանուր անզգայացնողներ, թթվածին	
ա. շնչառման դեղեր	
Ազոտի ենթօքսիդ Nitrous Oxide	զազ շնչառման
Թթվածին Oxygen	զազ շնչառման
Հալոթան Halothane	լուծույթ շնչառման
Իզոֆլուրան Isoflurane	հեղուկ շնչառման
բ. ներարկման դեղեր	
Կետամին Ketamine	լուծույթ ներարկման, 500մգ/10մլ
Պրոպոֆոլ Propofol	լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 20մգ/մլ
Այլընտրանքային	
Թիոպենտալ Thiopental	դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ, 1000մգ
Ֆենտանիլ Fentanyl	լուծույթ ներարկման, 0.05մգ/մլ
2) տեղային անզգայացնողներ	
Բուպիվակային Bupivacaine	լուծույթ ներարկման, 0.25%, 0.5% լուծույթ ներարկման (ողնուղեղային անզգայացման), 0.5%
Լիդոկային Lidocaine	լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 20մգ/մլ, 100մգ/մլ, լուծույթ ներարկման (ողնուղեղային անզգայացման), 5% դեղաձևեր տեղային կիրառման, 2%, 4%, 5%, 10%
Լիդոկային + Էպինեֆրին (Ադրենալին) Lidocaine + Epinephrine (Adrenaline)	լուծույթ ներարկման, 1%, 2% + Էպինեֆրին 1:200 000 ատամնաբուժական փամփուշտ 2% + Էպինեֆրին 1:80 000
Այլընտրանքային	
Էֆեդրին Ephedrine	լուծույթ ներարկման, 30մգ/մլ (ծննդաբերության ընթացքում ողնուղեղային անզգայացման համար՝ թերճնշումը կանխարգելելու նպատակով)
3) նախադեղատոգորման (պրեմեդիկացիայի) և կարճատև միջամտությունների ընթացքում անդորրաբեր (սեդատիվ) դեղեր	
Ատրոպին	լուծույթ ներարկման, 1մգ/մլ

Atropine	
Միդազոլամ Midazolam	լուծույթ ներարկման, 1մգ/մլ, 5մգ/մլ, հեղուկ ներքին ընդունման 2մգ/մլ դեղահատեր 7.5մգ, 15մգ
Մորֆին Morphine	լուծույթ ներարկման, 10մգ/մլ
Դիազեպամ Diazepam	լուծույթ ներարկման, 5մգ/մլ, դեղահատ, 5մգ, 10մգ
2. ՑԱՎԱԶԵՐԾՈՂ ԵՎ ԱՄՈՔԻԶ (ՊԱԼԻԱՏԻՎ) ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	
1) ոչ ափիոնային և ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր	
Ացետիլսալիցիլաթթու Acetylsalicylic acid	դեղահատ, 100մգ-500մգ մոմիկներ ուղիղաղիքային, 50մգ-150մգ
Դիկլոֆենակ Diclofenac	դեղահատ, դեղապատիճ, 25մգ-100մգ, լուծույթ ներարկման, 25մգ/մլ, դոնորոլ, 1%, 5%
Իբուպրոֆեն Ibuprofen	դեղահատ, 200մգ, 400մգ, 600մգ, լուծույթ ներքին ընդունման, 20մգ/մլ, 40մգ/մլ, 200մգ/5մլ 3 ամսականից ոչ փոքր երեխաների համար
Պարացետամոլ Paracetamol	դեղահատ, 100մգ-500մգ, մոմիկներ ուղիղաղիքային, 50մգ, 100մգ, 150մգ, 250մգ լուծույթ ներքին ընդունման, 120մգ/5մլ, 125մգ/5մլ լուծույթ կաթիլաներարկման 10մգ/մլ
Այլընտրանքային	
Կետոպրոֆեն Ketoprofen	դեղահատ, դեղապատիճ 50մգ, 200մգ, լուծույթ ներարկման 25մգ/մլ, 50մգ/մլ
Մետամիզոլ Metamizole	լուծույթ ներարկման 500մգ/մլ
2) ափիոնային ցավազերծիչներ	
Մորֆին Morphine	լուծույթ ներարկման, 10մգ/մլ գրանուլներ (դանդաղ ձերբագատման, ջրով խառնելու), 20մգ-200մգ հեղուկ ներքին ընդունման, 2մգ/մլ, 10մգ/5մլ, 20մգ/մլ դեղահատ (դանդաղ ձերբագատման), 10մգ-200մգ դեղահատ 5մգ, 10մգ
Տրիմեպերիդին Trimeperidine	լուծույթ ներարկման, 2%
Կոդեին Codeine	դեղահատ, 30մգ
Տրամադոլ Tramadol	դեղահատ, դեղապատիճ, 50մգ լուծույթ ներարկման, 50մգ/մլ, 100մգ/2մլ
Ֆենտանիլ Fentanyl	սպեղանի տրանսդերմալ, 12մկգ/ժ, 25մկգ/ժ, 50մկգ/ժ, 75մկգ/ժ, 100մկգ/ժ
Մեթադոն Methadone	դեղահատ, 5մգ, 10մգ դեղահատեր ներքին ընդունման դեղակախության, 40մգ խտանյութ ներքին ընդունման լուծույթի, 5մգ/մլ, 10մգ/մլ, 25մգ/մլ լուծույթ ներքին ընդունման 5մգ/5մլ, 10մգ/5մլ, 10մգ/մլ
3) այլ ընդհանուր ախտանիշների համար դեղեր՝ ամոքիչ բուժօգնության ընթացքում	
Ամիտրիպտիլին	դեղահատ, 10մգ, 25մգ, 75մգ

Amitriptyline	
Ցիկլիզին Cyclizine	լուծույթ ներարկման, 50մգ/մլ դեղահատ, 50մգ
Դեքսամեթազոն Dexamethasone	լուծույթ ներարկման, 4մգ/մլ, 5մգ/մլ, դեղահատ, 0.5 մգ, 2մգ, 4մգ լուծույթ ներքին ընդունման, 2մգ/5մլ
Դիազեպամ Diazepam	լուծույթ ներարկման, 5մգ/մլ, դեղահատ, 5մգ, 10մգ լուծույթ ներքին ընդունման, 2մգ/5մլ հեղուկ ուղիղաղիքային, 2.5մգ, 5մգ, 10մգ
Դոկուսեյտ նատրիում Docusate sodium	դեղապատիճ, 100մգ, լուծույթ ներքին ընդունման, 50մգ/5մլ
Ֆլուօքսետին Fluoxetine	դեղապատիճ, 20մգ
Հալոպերիդոլ Haloperidol	լուծույթ ներարկման, 5մգ/մլ, դեղահատ, 0.5մգ, 1.5մգ, 2մգ, 5մգ լուծույթ ներքին ընդունման, 2մգ/մլ
Հիոսցին Hyoscine	լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 20մգ/մլ դեղահատ, 10մգ
Լակտուլոզ Lactulose	լուծույթ ներքին ընդունման, 660մգ/մլ, 667մգ/մլ, 670մգ/մլ, 3.1-3.7գ/5մլ
Լոպերամիդ Loperamide	դեղահատ, դեղապատիճ, 2մգ
Մետոկլոպրամիդ Metoclopramide	լուծույթ ներարկման, 5մգ/մլ դեղահատ, 10մգ լուծույթ ներքին ընդունման, 5մգ/5մլ
Միդազոլամ Midazolam	լուծույթ ներարկման, 1մգ/մլ, 5մգ/մլ, հեղուկ ներքին ընդունման, 2մգ/մլ դեղահատեր, 7.5մգ, 15մգ
Օնդանսետրոն Ondansetron	լուծույթ ներարկման, 2մգ/մլ, լուծույթ ներքին ընդունման, 4մգ/5մլ, դեղահատ, դեղապատիճ, 4մգ, 8մգ
Սենոզիդներ A, B Sennosides A, B	դեղահատ, 70մգ
Տամսուլոզին Tamsulosin	դեղահատ, դեղապատիճ, 0.4մգ
Տոլպերիզոն Tolperisone	դեղահատ, 50մգ, 150մգ
Պիրացետամ Piracetam	լուծույթ ներարկման, 200մգ/մլ դեղահատ, 400մգ, 800մգ, 1200մգ
Դիոսմին + Հեսպերիդին Diosmin + Hesperidin	դեղահատ, 450մգ + 50մգ
3. ԱԼԵՐԳԻԱՅԻ, ԱՆԱՖԻԼԱՔՄԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐ	
Դեքսամեթազոն Dexamethasone	լուծույթ ներարկման, 4մգ/մլ, 5մգ/մլ
Դիֆենհիդրամին Diphenhydramine	դեղահատ, 50մգ, 100մգ լուծույթ ներարկման, 10մգ/մլ
Էպինեֆրին (Ադրենալին) Epinephrine (Adrenaline)	լուծույթ ներարկման, 1.82մգ/մլ, 1մգ/մլ

Լորատադին Loratadine	դեղահատ, 10մգ, լուծույթ ներքին ընդունման, 1մգ/մլ
Պրեդնիզոլոն Prednisolone	դեղահատ, 5մգ, 25մգ լուծույթ ներարկման, 30մգ/մլ, լուծույթ ներքին ընդունման, 5մգ/մլ
Հիդրոկորտիզոն Hydrocortisone	դեղափոշի ներարկման լուծույթի, 100մգ
Նորեպինեֆրին (Նորադրենալին) Norepinephrine (Norepinephrine)	լուծույթ ներարկման, 1մգ/մլ,
4. ՀԱԿԱԹՈՒՑՆԵՐ ԵՎ ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԵՂԵՐ	
1) ոչ հասկոքոշիչ	
Ակտիվացված ածուխ Charcoal Activated	դեղահատ, 250մգ
2) հասկոքոշիչ	
Ատրոպին Atropine	լուծույթ ներարկման, 1մգ/մլ
Ացետիլցիստեին Acetylcysteine	լուծույթ ներարկման, 100մգ/մլ, 200մգ/մլ լուծույթ ներքին ընդունման, 10%, 20% դեղահատեր դյուրալույծ, 100մգ, 200մգ, 600մգ
Կալցիումի գլյուկոնատ Calcium gluconate	լուծույթ ներարկման, 100մգ/մլ
Մեթիլթիոնինի քլորիդ Methylthioninium Chloride	լուծույթ ներարկման, 10մգ/մլ
Նալոքսոն Naloxone	լուծույթ ներարկման, 400մկգ
Նատրիումի նիտրիտ Sodium nitrite	լուծույթ ներարկման, 30մգ/մլ
Պենիցիլամին Penicillamine	դեղապատիճ, դեղահատ, 250մգ
Նատրիումի թիոսուլֆատ Sodium Thiosulfate	լուծույթ ներարկման, 250մգ/մլ, 300մգ/մլ
5. ՀԱԿԱՑՆՑՈՒՄԱՅԻՆ, ՀԱԿԱԷՊԻԼԵՊՍԱՅԻՆ ԴԵՂԵՐ	
Դիազեպամ Diazepam	լուծույթ ներարկման, 5մգ/մլ, դոնդող կամ ուղիղաղիքային լուծույթ, 5մգ/մլ
Կարբամազեպին Carbamazepine	դեղահատ, 100մգ - 400մգ դեղահատեր ծամելու, 100մգ-200մգ լուծույթ ներքին ընդունման, 100մգ/5մլ
Լամոտրիջին Lamotrigine	դեղահատ, 25մգ, 50մգ, 100մգ, 200մգ դեղահատեր ծամելու 2մգ, 5մգ, 25մգ, 50 մգ, 100 մգ, 200մգ
Լորազեպամ Lorazepam	լուծույթ ներարկման, 2մգ/մլ, 4մգ/մլ
Մագնեզիումի սուլֆատ Magnesium sulfate	լուծույթ ներարկման, 0.5գ/մլ, էկլամպսիայի և ծանր նախաէկլամպսիայի դեպքում կիրառման համար, ոչ այլ ցնցումների դեպքում
Միդազոլամ Midazolam	լուծույթ ներարկման, 1մգ/մլ, 5մգ/մլ
Վալպրոյաթթու	դեղահատ, 200մգ, 300մգ, 500մգ, դեղահատ

Valproic acid	դյուրալույծ, 100մգ լուծույթ ներքին ընդունման, 50մգ/մլ, 200մգ/5մլ, 300մգ/մլ
Ֆենիտոյին Phenytoin	լուծույթ ներարկման, 50մգ/մլ լուծույթ ներքին ընդունման, 25մգ-30մգ/5մլ դեղապատիճ, դեղահատ, 25մգ, 50մգ, 100մգ, 117մգ դեղահատեր ծամելու, 50մգ
Ֆենոբարբիտալ Phenobarbital	լուծույթ ներարկման, 200մգ/մլ դեղահատ, 15մգ-100մգ լուծույթ ներքին ընդունման, 15մգ/5մլ
Կլոնազեպամ clonazepam	դեղահատեր, 2մգ
Գլիցին Glycine	դեղահատեր ենթալեզվային 100մգ, լուծույթ ողողման 15մգ/մլ
Տոպիրամատ Topiramate	դեղահատեր թաղանթապատ 25մգ, 50մգ, 100մգ
Լևետիրացետամ Levetiracetam	դեղահատեր թաղանթապատ 250մգ, 500մգ
Գաբապենտին Gabapentin	դեղապատիճներ 300մգ
Այլընտրանքային	
Էթոսուքսիմիդ Ethosuximide	դեղապատիճ, 250մգ լուծույթ ներքին ընդունման, 250մգ/5մլ
Վալպրոյաթթու Valproic acid	լուծույթ ներարկման, 100մգ/մլ
6. ՀԱԿԱՎԱՐԱԿԱՑԻՆ ԴԵՂԵՐ	
1) որդամուղ դեղեր	
ա. ադիքային որդամուղներ	
Ալբենդազոլ Albendazole	դեղահատ, 200մգ-600մգ լուծույթ ներքին ընդունման, 20մգ/մլ, 40մգ/մլ դեղահատեր ծամելու, 400մգ
Լևամիզոլ Levamisole	դեղահատ, 50մգ, 150մգ
Մեբենդազոլ Mebendazole	դեղահատ, 100մգ, 500մգ
Պիրանտել Pyrantel	դեղահատ, 125մգ, 250մգ, լուծույթ ներքին ընդունման, 125մգ/2.5մլ, 50մգ/մլ
Պրազիքվանտել Praziquantel	դեղահատ, 150մգ, 600մգ
Նիկլոսամիդ Niclosamide	դեղահատ, 500մգ
Իվերմեկտին Ivermectin	դեղահատ, 3մգ
2) հակամանրէային դեղեր	
ա. բետա-լակտամային դեղեր	
Ամպիցիլին Ampicillin	դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ, 1գ
Ամօքսիցիլին	դեղապատիճ, 250մգ, 500մգ, դեղափոշի ներքին

Amoxicillin	ընդունման լուծույթի, 125մգ/5մլ, 250մգ/5մլ դեղափոշի ներարկման լուծույթի, 250մգ, 500մգ, 1գ
Ամօքսիցիլին + Քլավուլանաթթու Amoxicillin + Clavulanic acid	դեղահատ, 500մգ + 125մգ դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 125մգ + 31.25մգ/5մլ, 250մգ + 62.5մգ/5մլ դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ + 100մգ, 1000մգ + 200մգ
Բենզաթին Բենզիլպենիցիլին Benzathine Benzylpenicillin	դեղափոշի ներարկման լուծույթի, 1.2մլն ՄՄ, 2.4մլն ՄՄ բենզիլպենիցիլին
Բենզիլպենիցիլին Benzylpenicillin	դեղափոշի ներարկման լուծույթի, 1000000ՄՄ, 5000000ՄՄ
Ցեֆալեքսին Cefalexin	դեղապատիճ, 250մգ, 500մգ, դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 125մգ/5մլ, 250մգ/5մլ
Ցեֆազոլին Cefazolin	դեղափոշի ներարկման լուծույթի, 0.5գ, 1գ` > 1 ամսականից
Ցեֆիքսիմ Cefixime	դեղահատ, դեղապատիճ 100մգ, 200մգ, 400մգ դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 20մգ/մլ, 100մգ/5մլ
Ցեֆտրիաքսոն Ceftriaxone	դեղափոշի ներարկման լուծույթի, 250մգ, 500մգ, 1գ
Կլօքսացիլին Cloxacillin	դեղապատիճ, 500մգ, 1մգ, դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ, դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 125մգ/5մլ
Պրոկային Բենզիլպենիցիլին Procaine Benzylpenicillin	դեղափոշի ներարկման լուծույթի, 1գ, 3գ
Ֆենօքսիմեթիլպենիցիլին Phenoxymethylpenicillin	դեղահատ, 250մգ, դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 250մգ/5մլ
Պիպերացիլին + Տազոբակտամ Piperacillin + Tazobactam	դեղափոշի ներարկման լուծույթի, 2000մգ +250մգ, 4000մգ + 500մգ
Այլընտրանքային	
Իմիպենեմ + Ցիլաստատին Imipenem + Cilastatin	դեղափոշի ներարկման լուծույթի, 500գ + 500մգ
Ցեֆոտաքսիմ Cefotaxime	դեղափոշի ներարկման լուծույթի, 250մգ, 500մգ, 1000մգ
Ցեֆտազիդիմ Ceftazidime	դեղափոշի ներարկման լուծույթի, 250մգ, 500մգ, 1գ
Մերոպենեմ Meropenem	դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ, 1000մգ
բ. այլ հակամանրէային դեղեր	
Ազիթրոմիցին Azithromycin	դեղապատիճ, 250մգ, 500մգ դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 100մգ/5մլ, 200մգ/5մլ, 40մգ/մլ
Էրիթրոմիցին Erythromycin	դեղահատ, 100մգ, 200մգ, 250մգ, 400մգ
Ամիկացին Amikacin	լուծույթ ներարկման, 250մգ/մլ, 500մգ/2մլ, դեղափոշի ներարկման լուծույթի 500մգ, 1000մգ
Գենտամիցին	լուծույթ ներարկման, 10մգ/մլ, 40մգ/մլ, 80մգ/2մլ

Gentamicin	
Դօքսիցիկլին Doxycycline	դեղապատիճ կամ դեղահատ, 50մգ, 100մգ դեղափոշի ներքին ընդունման, 25մգ/5մլ, 50մգ/5մլ դեղափոշի ներարկման լուծույթի, 100մգ
Մետրոնիդազոլ Metronidazole	դեղահատ, 200մգ – 500մգ, լուծույթ ներարկման, 5մգ/մլ, մոմիկ, 500մգ, 1գ լուծույթ ներքին ընդունման, 25մգ/մլ, 200մգ/5մլ
Նիտրոֆուրանտոյին Nitrofurantoin	դեղահատ, 50մգ, 100մգ լուծույթ ներքին ընդունման 25մգ/5մլ
Վլարիթրոմիցին Clarithromycin	դեղահատ, 250մգ, 500մգ գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի, 125մգ/5մլ, 250մգ/5մլ դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ
Սպեկտինոմիցին Spectinomycin	դեղափոշի ներարկման լուծույթի, 2գ
Վլինդամիցին Clindamycin	դեղապատիճ, 150մգ, 300մգ, լուծույթ ներարկման 150մգ/մլ, լուծույթ ներքին ընդունման, 75մգ/5մլ
Սուլֆամեթօքսազոլ + Տրիմեթոպրիմ Sulfamethoxazole + Trimethoprim	դեղահատ, 100մգ + 20մգ, 400մգ + 80մգ, 800մգ + 160մգ, լուծույթ ներքին ընդունման, 40մգ/մլ + 8մգ/մլ, 200մգ + 40մգ/5մլ լուծույթ ներարկման 80մգ/մլ + 16մգ/մլ
Տրիմեթոպրիմ Trimethoprim	դեղահատ, 100մգ, 200մգ
Ցիպրոֆլօքսացին Ciprofloxacin	դեղահատ, 250մգ, 500մգ, 750մգ, լուծույթ ներարկման, 2մգ/մլ լուծույթ ներքին ընդունման, 250մգ/5մլ
Քլորամֆենիկոլ Chloramphenicol	դեղապատիճ, դեղահատ, 250մգ, 500մգ դեղա- փոշի ներարկման լուծույթի 500մգ, 1000մգ լուծույթ ներքին ընդունման, 150մգ/5մլ
Վանկոմիցին Vancomycin	դեղապատիճ, 125մգ, 250մգ դեղափոշի ներարկման լուծույթի, 250մգ, 500մգ, 1000մգ
Այլընտրանքային	
Լևոֆլօքսացին Levofloxacin	դեղահատ, 250մգ, 500մգ, 750մգ լուծույթ կաթիլաներարկման, 500մգ/100մլ
Ցեֆեպիմ Cefepime	դեղափոշի ներարկման լուծույթի, 500մգ, 1գ, 2գ
Ցեֆուրօքսիմ Cefuroxim	դեղահատ, 250մգ դեղափոշի ներարկման լուծույթի, 750մգ
Դորիպենեմ Doripenem	դեղափոշի կաթիլաներարկման լուծույթի, 500մգ
գ. հակապալարախտային (հակատուբերկույրոցային) դեղեր	
Էթամբուտոլ Ethambutol	դեղահատ, դեղապատիճ, 100մգ - 400մգ, լուծույթ ներքին ընդունման, 25մգ/մլ
Էթամբուտոլ + Իզոնիազիդ Ethambutol + Isoniazid	դեղահատ, 400մգ + 150մգ
Էթամբուտոլ + Իզոնիազիդ + Ռիֆամպիցին Etambutol + Isoniazid + Rifampicin	դեղահատ, դեղապատիճ, 275մգ + 75մգ + 150մգ

Էթամբուտոլ + Իզոնիազիդ + Պիրազինամիդ + Ռիֆամպիցին Etambutol + Isoniazid + Pyrazinamide + Rifampicin	դեղահատ, դեղապատիճ, 275մգ + 75մգ + 400մգ + 150մգ
Իզոնիազիդ Isoniazid	դեղահատ, 50մգ, 100մգ - 300մգ, լուծույթ ներքին ընդունման, 50մգ/5մլ
Իզոնիազիդ + Ռիֆամպիցին Isoniazid + Rifampicin	դեղահատ, դեղապատիճ, 75մգ + 150մգ, 150մգ + 300մգ, 60մգ + 60մգ, դեղահատեր տարալուծվող, 50մգ + 75մգ, 30մգ + 60մգ
Իզոնիազիդ + Պիրազինամիդ + Ռիֆամպիցին Isoniazid + Pyrazinamide + Rifampicin	դեղահատ, 60մգ + 30մգ + 60մգ, 75մգ + 400մգ + 150մգ, 150մգ + 500մգ + 150մգ դեղահատեր տարալուծվող, 50մգ + 150մգ + 75մգ
Պիրազինամիդ Pyrazinamide	դեղահատ, 400մգ, 500մգ դեղահատեր տարալուծվող, 150մգ լուծույթ ներքին ընդունման, 30մգ/մլ
Ռիֆամպիցին Rifampicin	դեղահատ, դեղապատիճ, 150մգ, 300մգ լուծույթ ներքին ընդունման, 20մգ/մլ
Ռիֆաբուտին Rifabutin	դեղապատիճ, 150մգ՝ միայն ՄԻԱՎ-ով հիվանդների համար, ովքեր ստանում են պրոտեազի արգելակիչներ
Ռիֆապենտին Rifapentine	դեղահատ, 150մգ՝ միայն լատենտ (թաքնված) պալարախտի բուժման համար
Այլընտրանքային	
դ. բազմադեղակայուն պալարախտի դեպքում կիրառվող երկրորդային ընտրության դեղեր	
Ամիկացին Amikacin	լուծույթ ներարկման, 250մգ/մլ , 500մգ/2մլ դեղափոշի ներարկման լուծույթի 500 մգ, 1000մգ
Կապրեոմիցին Capreomycin	դեղափոշի ներարկման լուծույթի, 1գ
Կլոֆազիմին Clofazimine	դեղապատիճ, 50մգ, 100մգ
Ցիկլոսերին Cycloserine	դեղահատ կամ դեղապատիճ, 250մգ
Էթիոնամիդ Ethionamide	դեղահատ, 125մգ, 250մգ այլընտրանքային Պրոթիոնամիդ/ Prothionamide
Կանամիցին Kanamycin	դեղափոշի ներարկման լուծույթի, 1գ
Լևոֆլոքսացին Levofloxacin	դեղահատ, 250մգ, 500մգ, 750մգ
Լինեզոլիդ Linezolid	լուծույթ ներարկման, 2մգ/մլ, դեղահատ, 400մգ, 600մգ դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 100մգ/5մլ
Պ-ամինոսալիցիլաթթու P-aminosalicylic acid	դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 4գ, դեղահատ, 500մգ
Մոքսիֆլոքսացին Moxifloxacin	դեղահատ, 400մգ
Ստրեպտոմիցին	դեղափոշի ներարկման լուծույթի, 1գ

Streptomycin	
3) հակասնկային դեղեր	
Ամֆոտերիցին B Amphotericin B	դեղափոշի ներարկման լուծույթի, 50մգ
Գրիզեոֆուլվին Griseofulvin	դեղապատիճ կամ դեղահատ, 125մգ, 250մգ, լուծույթ ներքին ընդունման, 125մգ/5մգ
Կլոտրիմազոլ Clotrimazole	նրբաքսուր հեշտոցային, 1%, 10% դեղահատ հեշտոցային, 100մգ, 500մգ
Նիստատին Nystatin	դեղահատ, 100 000ՄՄ, 500 000 ՄՄ դեղահատ հեշտոցային, 100 000ՄՄ լուծույթ ներքին ընդունման, 50մգ/5մլ, 100 000ՄՄ/մլ
Ֆլուկոնազոլ Fluconazole	դեղապատիճ, 50մգ - 200մգ, լուծույթ ներարկման, 2մգ/մլ, լուծույթ ներքին ընդունման, 50մգ/5մլ
Ֆլուցիտոզին Flucytosine	դեղապատիճ, 250մգ, լուծույթ կաթիլաներարկման, 2.5գ/250 մլ
Իտրակոնազոլ Itraconazole	դեղապատիճ, 100մգ, լուծույթ ներքին ընդունման, 10մգ/մլ
Վորիկոնազոլ Voriconazole	դեղահատ, 50մգ, 200մգ դեղափոշի ներարկման լուծույթի, 200մգ դեղափոշի ներքին ընդունման լուծույթի, 40մգ/մլ
4) հակավիրուսային դեղեր	
ա. հակահերպեսային դեղեր	
Ացիկլովիր Aciclovir	դեղահատ, 200մգ, 400մգ դեղափոշի ներարկման լուծույթի, 250մգ լուծույթ ներքին ընդունման, 200մգ/5մլ
բ. հակառետրովիրուսային դեղեր	
Աբակավիր Abacavir	դեղահատ, 300մգ, դեղահատեր տարալուծվող, 60մգ
Աբակավիր + Լամիվուդին Abacavir + Lamivudine	դեղահատ, 600մգ + 300մգ, դեղահատեր տարալուծվող, 60մգ + 30մգ, 120մգ + 60մգ
Ատազանավիր Atazanavir	դեղապատիճ, դեղահատ, 100մգ, 300մգ
Զիդովուդին Zidovudine	դեղապատիճ, 250մգ, լուծույթ ներքին ընդունման, 50մգ/5մլ, լուծույթ կաթիլաներարկման, 10մգ/մլ, դեղահատ, 300մգ դեղահատեր տարալուծվող, 60մգ
Էմտրիցիտաբին + Տենոֆովիր Emtricitabine + Tenofovir	դեղահատ, 200մգ + 300մգ
Էֆավիրենց Efavirenz	դեղահատ, 200մգ, 600մգ
Էֆավիրենց + Էմտրիցիտաբին + Տենոֆովիր Efavirenz + Emtricitabine + Tenofovir	դեղահատ, 600մգ + 200մգ + 300մգ
Էֆավիրենց + Լամիվուդին + Տենոֆովիր Efavirenz + Lamivudine + Tenofovir	դեղահատ, 400մգ + 300մգ + 300մգ

Efavirenz + Lamivudine + Tenofovir	
Լամիվուդին Lamivudine	դեղահատ, 150մգ, լուծույթ ներքին ընդունման, 50մգ/5մլ
Լամիվուդին + Զիդովուդին Lamivudine + Zidovudine	դեղահատ, 30մգ + 60մգ, 150մգ + 300մգ
Լամիվուդին + Նևիրապին + Զիդովուդին Lamivudine + Nevirapine + Zidovudine	դեղահատ, 30մգ + 50մգ + 60մգ, 150մգ + 200մգ + 300մգ
Լոպինավիր + Ռիտոնավիր Lopinavir + Ritonavir	դեղահատ, դեղապատիճ, 100մգ + 25մգ, 200մգ + 50մգ լուծույթ ներքին ընդունման, 400մգ + 100մգ/5մլ, 80մգ/մլ + 20մգ/մլ
Նևիրապին Nevirapine	դեղահատ, 200մգ, դեղահատեր տարալուծվող, 50մգ լուծույթ ներքին ընդունման, 50մգ/5մլ
Ռիտոնավիր Ritonavir	դեղահատ, 25մգ, 100մգ, լուծույթ ներքին ընդունման, 400մգ/5մլ
Տենոֆովիր դիսոքսիլ ֆումարատ Tenofovir disoproxil fumarate	դեղահատ, 300մգ
Ատազանավիր + Ռիտոնավիր Atazanavir + Ritonavir	դեղահատ, 300մգ + 100մգ, 150մգ + 50մգ
Դարունավիր Darunavir	դեղահատ, 75մգ, 400մգ, 600մգ, 800մգ
Դոլուտեգրավիր Dolutegravir	դեղահատ, 50մգ
Րալտեգրավիր Raltegravir	դեղահատեր ծամելու, 25մգ, 100մգ դեղահատ, 400մգ
Իզոնիազիդ + Պիրիդոքսին + Սուլֆամեթոքսազոլ + Տրիմեթոպրիմ Isoniazid + Pyridoxine + Sulfamethoxazole + Trimethoprim	դեղահատ, 300մգ + 25մգ + 800մգ + 160մգ
Այլ հակավիրուսային դեղեր	
Օսելտամիվիր Oseltamivir	դեղապատիճ, 30մգ, 45մգ, 75մգ դեղափոշի ներքին ընդունման դեղակախույթի, 6մգ/մլ, 12մգ/մլ կիրառել հաստատված կամ ենթադրվող գրիպի վիրուսով պայմանավորված ծանր հիվանդության ժամանակ՝ կրիտիկական վիճակում գտնվող հոսպիտալացված հիվանդների մոտ
5) մակաբուժասպան դեղեր	
ա. հակամեդիացին դեղեր	
Մետրոնիդազոլ Metronidazole	դեղահատ, 200մգ - 500մգ, լուծույթ ներարկման, 5մգ/մլ, լուծույթ ներքին ընդունման, 25մգ/մլ, 200մգ/5մլ
Դիլոքսանիդ Diloxanide	դեղահատ, 500մգ
բ. հակալեյշմանիզային դեղեր	
Մեգլումին անտիմոնիատ	լուծույթ ներարկման, 300մգ/մլ

Meglumine antimoniate	
Սաֆնոտերիցին B Amphotericin B	դեղափոշի ներարկման լուծույթի, 50մգ
Միլթեֆոզին Miltefosin	դեղահատ, 10մգ, 50մգ
Պարոմոմիցին Paromomycin	լուծույթ մ/մ ներարկման, 750մգ
գ. հակամալարիային դեղեր	
Արտեմեթեր Artemether	լուծույթ ներարկման, 80մգ/մլ
Ամոդիաքվին Amodiaquine	դեղահատ, 153մգ - 200մգ
Արտեմեթեր + Լումեֆանտրին Artemether + Lumefantrine	դեղահատ, 20մգ + 120մգ դեղահատեր տարալուծվող, 20մգ + 120մգ
